

ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ ՇԻՆՀՐԱՊԱՐԱԿՆԵՐ

17.10.2013

Առաջնահերթ հիմնախնդիրների լուծման հրատապ ծրագրերի շրջանակներում իրականացված շինարարական աշխատանքներին տեղում ծանոթանալու նպատակով ՀՀ Կոտայքի մարզպետի տեղակալ Վ.Բակլաջյանն աշխատանքային այցելությունների շրջանակներում հետևել է Զրվեժի և Նոր Հաճնի N1 հիմնական դպրոցներում ընթացող շինարարական աշխատանքների ընթացքին:

Մարզպետի տեղակալը զրուցել է դպրոցների տնօրենների և վերանորոգումն իրականացնող կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, պատասխանել է նրանց հուզող հարցերին, ինչպես նաև տվել է համապատասխան ցուցումներ: